# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2012թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում / վերլուծություն/

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 122406 գործարքներ, որոնց քանակը, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 10.3%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 33388 օտարման գործարքների 76.3%-ը կազմել են առուվաճառքները, 23.0%-ը՝ նվիրատվությունները և 0.7%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 40.2%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 4.8%-ով: 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 10009 առուվաճառքի գործարքների 60.6%-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 11.0%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|
| | 9 ամիս 2011թ. | 9 ամիս 2012թ. |
| Կենտրոն | 442300 | 409100 |
| Արաբկիր | 345400 | 339000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 266700 | 266100 |
| Նոր-Նորք | 225500 | 229400 |
| Ավան | 236800 | 239100 |
| Էրեբունի | 234900 | 236300 |
| Շենգավիթ | 230100 | 235000 |
| Դավթաշեն | 258200 | 259900 |
| Աջափնյակ | 223100 | 226700 |
| Մալաթիա-Սեբաստիա | 222600 | 225000 |
| Նուբարաշեն | 147500 | 140300 |
| Միջինը Երևանում | ***257600*** | ***255100*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 1.0%-ով

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3069 բնակարաններ, որոնց քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.3%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|---|
| | | 9 ամիս 2011թ. | 9 ամիս 2012թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 131100 | 110900 |
| | Ապարան | 49600 | 49000 |
| | Թալին | 60700 | 61200 |
| Արարատ | Արտաշատ | 96300 | 91700 |
| | Մասիս | 122200 | 107900 |
| | Վեդի | 93400 | 96600 |
| | Արարատ | 81800 | 72900 |
| Արմավիր | Վաղարշապատ | 144300 | 151300 |
| | Արմավիր | 120700 | 177100 |
| | Մեծամոր | 82700 | 85900 |
| Գեղարքունիք | Սևան | 90600 | 97700 |
| | Գավառ | 50500 | 52800 |
| | Մարտունի | 89900 | 104500 |
| | Վարդենիս | 34200 | 34600 |
| | Ճամբարակ | 22700 | 21800 |
| Լոռի | Վանաձոր | 90300 | 85400 |
| | Ստեփանավան | 66500 | 74200 |
| | Սպիտակ | 88200 | 99900 |
| | Ալավերդի | 35200 | 50500 |
| | Տաշիր | 41700 | 42000 |
| | Թումանյան | 10900 | 11200 |
| | Շամլուղ | 7100 | 8000 |
| | Ախթալա | 18400 | 19600 |
| Կոտայք | Աբովյան | 141300 | 151300 |
| | Նոր Հաճն | 124700 | 128100 |
| | Բյուրեղավան | 105600 | 107000 |
| | Եղվարդ | 107400 | 108500 |
| | Հրազդան | 60200 | 58800 |
| | Ծաղկաձոր | 184900 | 293600 |
| | Չարենցավան | 74600 | 83300 |
| Շիրակ | Գյումրի | 108400 | 106600 |
| | Արթիկ | 64000 | 64100 |
| | Մարալիկ | 33100 | 36100 |
| Սյունիք | Գորիս | 129200 | 115100 |
| | Կապան | 101600 | 89200 |
| | Սիսիան | 87900 | 80400 |
| | Մեղրի | 67600 | 67600 |
| | Ագարակ | 38600 | 41200 |
| | Քաջարան | 66400 | 96100 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 |
| Վայոց Ձոր | Վայք | 77700 | 83900 |
| | Եղեգնաձոր | 109200 | 118300 |
| | Ջերմուկ | 121200 | 98800 |
| Տավուշ | Դիլիջան | 106100 | 101900 |
| | Իջևան | 127600 | 112200 |
| | Բերդ | 47300 | 50100 |
| | Նոյեմբերյան | 38700 | 41400 |
| | Այրում | 27400 | 24600 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 4.9%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3437 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 987, մարզերում միասին վերցրած՝ 2450: 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.6%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 2.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել ՝ 8.6%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|
| | 9 ամիս 2011թ. | 9 ամիս 2011թ. |
| Կենտրոն | 462900 | 461700 |
| Արաբկիր | 373500 | 368200 |
| Քանաքեռ Զեյթուն | 277800 | 278300 |
| Նորք Մարաշ | 282700 | 304800 |
| Ավան | 244100 | 256300 |
| Էրեբունի | 240700 | 225300 |
| Շենգավիթ | 241100 | 242900 |
| Դավթաշեն | 271500 | 261300 |
| Աջափնյակ | 236700 | 238000 |
| Մալաթիա Սեբաստիա | 232900 | 224800 |
| Նուբարաշեն | 150000 | 144600 |
| Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից) | ***274000*** | ***273300*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը,/ 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 0.3 %-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | |
|---|---|---|---|
| | | 9 ամիս 2011թ. | 9 ամիս 2011թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 136000 | 132000 |
| | Ապարան | 51300 | 52500 |
| | Թալին | 61600 | 69100 |
| Արարատ | Արտաշատ | 103500 | 98800 |
| | Մասիս | 126600 | 111500 |
| | Վեդի | 96600 | 100000 |
| | Արարատ | 85500 | 87500 |
| Արմավիր | Վաղարշապատ | 161500 | 149400 |
| | Արմավիր | 125200 | 102600 |
| Գեղարքունիք | Սևան | 95000 | 92400 |
| | Գավառ | 52400 | 49800 |
| | Մարտունի | 91200 | 91600 |
| | Վարդենիս | 37200 | 34000 |
| | Ճամբարակ | 25300 | 26000 |
| Լոռի | Վանաձոր | 99200 | 96400 |
| | Ստեփանավան | 68400 | 87200 |
| | Սպիտակ | 93900 | 112400 |
| | Ալավերդի | 36600 | 45000 |
| | Տաշիր | 45300 | 50600 |
| | Թումանյան | 12400 | 12200 |
| | Շամլուղ | 9200 | 13200 |
| | Ախթալա | 20100 | 29400 |
| Կոտայք | Աբովյան | 150900 | 149900 |
| | Նոր Հաճն | 132000 | 128900 |
| | Բյուրեղավան | 108200 | 120000 |
| | Եղվարդ | 112800 | 115200 |
| | Հրազդան | 64400 | 78200 |
| | Ծաղկաձոր | 312300 | 304400 |
| | Չարենցավան | 77000 | 79300 |
| Շիրակ | Գյումրի | 118900 | 116500 |
| | Արթիկ | 65500 | 60700 |
| | Մարալիկ | 35300 | 48400 |
| Սյունիք | Գորիս | 136600 | 126900 |
| | Կապան | 105100 | 98000 |
| | Սիսիան | 89800 | 88700 |
| | Մեղրի | 69000 | 75300 |
| | Ագարակ | 39900 | 46000 |
| | Դաստակերտ | 10500 | 11600 |
| Վայոց Ձոր | Վայք | 79600 | 82800 |
| | Եղեգնաձոր | 115200 | 111300 |
| | Ջերմուկ | 123200 | 120300 |
| Տավուշ | Դիլիջան | 109100 | 105400 |
| | Իջևան | 134900 | 120400 |
| | Բերդ | 49200 | 57800 |
| | Նոյեմբերյան | 40500 | 46000 |
| | Այրում | 28600 | 34400 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին

գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են 0.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել են 10804 միավոր /6207.34 հա/ հողեր, որից Երևանում՝ 914 միավոր /220.18 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5640 միավոր /5539.05 հա/, որից Երևանում՝ 39 միավոր /6.60 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 3702 միավոր /346.64 հա/, որից Երևանում՝ 490 միավոր /39.64 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1234 միավոր /184.30 հա/, որից Երևանում՝ 365 միավոր /139.06 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 117 միավոր /83.18 հա/, որից Երևանում՝ 20 միավոր /34.87 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 53 միավոր /11.78 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 54 միավոր /18.92 հա/,
- ջրային հողեր՝ 4 միավոր /23.47 հա/ ընդհանուր մակերեսով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 9274 միավորի /5482.10 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 721 միավոր /203.90 հա/, նվիրատվության գործարքներ՝ 1459 միավոր /716.43 հա/, որից Երևանում՝ 188 միավոր /16.19 հա/ և փոխանակության գործարքներ՝ 71 միավոր /8.81 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.08 հա/:

Հանրապետությունում 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 9.2%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8.0%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 9.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 7.3%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արագածոտնի մարզում՝ 1436.17 հա, որից 1404.11 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 17.8%-ը կամ 1651 գործարքներ /748.69 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 145 միավոր /17.25 հա/, իսկ 81.5%-ը կամ 7558 միավորը /4618.17 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 564 միավոր /185.77 հա/: 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 65 գործարք /115.24 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

| | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ | Միա վոր | Մակ երես ը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 1 | 0.01 | 42 | 2.43 | 102 | 14.81 | 30 | 3.92 | 19 | 34.87 | 301 | 28.12 | 214 | 118.87 |
| Արագածոտն | 68 | 108.93 | 14 | 2.06 | 4 | 0.45 | 24 | 2.60 | 459 | 1295.18 | 1 | 0.14 | 200 | 23.82 | 24 | 2.23 |
| Արարատ | 67 | 103.65 | 8 | 1.91 | 32 | 2.99 | 29 | 1.26 | 715 | 463.14 | 9 | 11.44 | 403 | 34.23 | 30 | 0.99 |
| Արմավիր | 43 | 101.83 | 4 | 0.22 | 14 | 1.81 | 33 | 0.61 | 603 | 721.41 | 5 | 8.91 | 461 | 51.86 | 22 | 1.06 |
| Գեղարքունիք | 21 | 10.87 | 3 | 0.79 | 46 | 4.50 | 26 | 4.17 | 914 | 410.55 | 0 | 0.00 | 149 | 19.14 | 18 | 2.12 |
| Լոռի | 11 | 2.26 | 7 | 0.69 | 32 | 1.66 | 72 | 3.02 | 405 | 381.88 | 1 | 1.50 | 162 | 18.51 | 45 | 1.20 |
| Կոտայք | 117 | 172.61 | 8 | 3.31 | 280 | 21.07 | 135 | 3.67 | 694 | 369.76 | 15 | 9.32 | 671 | 56.02 | 86 | 5.38 |
| Շիրակ | 4 | 9.30 | 2 | 1.17 | 37 | 0.97 | 69 | 2.30 | 211 | 200.22 | 1 | 0.02 | 69 | 6.48 | 24 | 1.23 |
| Սյունիք | 14 | 60.52 | 3 | 4.27 | 16 | 2.92 | 25 | 1.27 | 146 | 207.83 | 3 | 0.32 | 77 | 6.83 | 14 | 0.77 |
| Վայոց Ձոր | 40 | 61.16 | 3 | 0.12 | 12 | 0.57 | 40 | 0.81 | 86 | 44.38 | 0 | 0.00 | 38 | 3.63 | 15 | 0.22 |
| Տավուշ | 18 | 15.49 | 7 | 0.52 | 31 | 2.73 | 37 | 1.90 | 101 | 54.21 | 2 | 0.60 | 55 | 5.10 | 15 | 1.14 |
| Ընդամենը | 403 | 646.62 | 60 | 15.07 | 546 | 42.10 | 592 | 36.42 | 4364 | 4152.48 | 56 | 67.12 | 258 6 | 253.74 | 507 | 135.21 |

Ստորև ներկայացվում է 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | Ուղղակի վաճառք | | | | | | | | Աճուրդ վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ օբյեկտներ ի հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Գյուղ. նշանա-կության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ / հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ | Միավ որ | Մակե րեսը /հա/ |
| Երևան | 75 | 10.21 | 1 | 0.01 | 11 | 0.67 | 63 | 9.53 | 70 | 7.04 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 31 | 1.76 | 39 | 5.28 |
| Արագածոտն | 2 | 0.01 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.01 | 108 | 114.03 | 68 | 108.93 | 14 | 2.06 | 4 | 0.45 | 22 | 2.59 |
| Արարատ | 3 | 0.03 | 1 | 0.02 | 1 | 0.01 | 1 | 0.0002 | 128 | 108.77 | 62 | 102.65 | 7 | 1.89 | 31 | 2.97 | 28 | 1.26 |
| Արմավիր | 13 | 0.26 | 0 | 0.00 | 3 | 0.18 | 10 | 0.08 | 75 | 75.02 | 37 | 72.64 | 4 | 0.22 | 11 | 1.63 | 23 | 0.53 |
| Գեղարքունիք | 6 | 0.35 | 0 | 0.00 | 4 | 0.32 | 2 | 0.03 | 90 | 19.98 | 21 | 10.87 | 3 | 0.79 | 42 | 4.18 | 24 | 4.14 |
| Լոռի | 22 | 0.57 | 1 | 0.27 | 2 | 0.01 | 19 | 0.29 | 100 | 7.06 | 11 | 2.26 | 6 | 0.42 | 30 | 1.65 | 53 | 2.73 |
| Կոտայք | 30 | 1.13 | 0 | 0.00 | 15 | 0.80 | 15 | 0.33 | 498 | 175.1 | 105 | 148.18 | 8 | 3.31 | 265 | 20.27 | 120 | 3.34 |
| Շիրակ | 43 | 1.50 | 1 | 0.03 | 16 | 0.39 | 26 | 1.08 | 69 | 12.24 | 4 | 9.30 | 1 | 1.14 | 21 | 0.58 | 43 | 1.22 |
| Սյունիք | 11 | 4.72 | 1 | 4.04 | 3 | 0.18 | 7 | 0.50 | 44 | 58.90 | 11 | 55.15 | 2 | 0.23 | 13 | 2.74 | 18 | 0.78 |
| Վայոց Ձոր | 8 | 0.03 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 8 | 0.03 | 86 | 62.56 | 39 | 61.08 | 3 | 0.12 | 12 | 0.57 | 32 | 0.79 |
| Տավուշ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 93 | 20.64 | 18 | 15.49 | 7 | 0.52 | 31 | 2.73 | 37 | 1.90 |
| Ընդամենը | **213** | **18.81** | **5** | **4.37** | **55** | **2.56** | **153** | **11.88** | **1361** | **661.34** | **376** | **586.55** | **55** | **10.70** | **491** | **39.53** | **439** | **24.56** |

Հանրապետությունում 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 27 գործարքներ /60.06 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 33.9%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 4.7 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 36.8%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.9%-ով, բնակելի

կառուցապաման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 32.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 32.0%-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ նվազել է 9.8%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 61 | 89.50 | 27.0 | 1100.3 | 292.5 | 295 | 230.65 | 365.0 | 12000.0 | 3951.4 |
| Ապարան | 2 | 0.28 | 1218.2 | 2730.0 | 1974.1 | 33 | 33.94 | 86.5 | 2727.3 | 693.4 |
| Թալին | 5 | 19.16 | 37.7 | 156.0 | 68.2 | 93 | 945.95 | 93.6 | 5494.5 | 598.4 |
| Ծաղկահովիտ | | | | | | 33 | 83.17 | 79.5 | 1000.0 | 239.1 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 19 | 13.32 | 72.3 | 8505.1 | 3368.4 | 300 | 106.70 | 335.1 | 10833.3 | 2697.6 |
| Մասիս | 24 | 36.97 | 63.4 | 2997.5 | 302.5 | 174 | 185.70 | 200.0 | 11904.8 | 3041.1 |
| Վեդի | 19 | 52.36 | 63.5 | 1044.8 | 322.7 | 233 | 168.36 | 207.0 | 10795.1 | 1799.4 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 20 | 24.25 | 63.0 | 1059.3 | 375.3 | 332 | 317.91 | 294.3 | 9090.0 | 1551.2 |
| Բաղրամյան | 9 | 43.37 | 35.4 | 1595.0 | 544.6 | 73 | 237.79 | 90.6 | 2561.1 | 731.5 |
| Վաղարշապատ | 8 | 5.02 | 39.6 | 2013.1 | 703.5 | 187 | 161.65 | 444.4 | 11764.7 | 2732.6 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 7 | 4.40 | 66.0 | 374.5 | 153.5 | 789 | 265.06 | 199.8 | 1875.0 | 396.3 |
| Ճամբարակ | | | | | | 37 | 23.42 | 60.5 | 953.3 | 334.5 |
| Մարտունի | 2 | 0.35 | 265.7 | 610.4 | 438.0 | 23 | 7.13 | 51.1 | 2850.0 | 725.3 |
| Սևան | 10 | 4.34 | 400.0 | 1221.0 | 810.5 | 17 | 12.78 | 52.2 | 2134.8 | 315.7 |
| Վարդենիս | 2 | 1.78 | 495.0 | 495.0 | 495.0 | 48 | 102.16 | 41.2 | 2575.1 | 377.9 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 2 | 0.20 | 187.0 | 1095.7 | 641.4 | 43 | 19.86 | 170.4 | 6424.2 | 668.5 |
| Գուգարք | 3 | 0.36 | 506.0 | 1439.2 | 926.6 | 40 | 11.17 | 234.6 | 6065.9 | 759.6 |
| Սպիտակ | 3 | 0.57 | 650.0 | 6441.1 | 2115.3 | 23 | 9.69 | 250.0 | 5555.5 | 727.4 |
| Ստեփանավան | 3 | 1.14 | 630.0 | 1325.1 | 1024.8 | 53 | 49.42 | 90.6 | 1686.6 | 294.8 |
| Տաշիր | | | | | | 201 | 230.24 | 45.3 | 1384.4 | 140.7 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 42 | 54.52 | 17.4 | 8423.8 | 693.0 | 230 | 97.02 | 279.3 | 11942.7 | 4669.2 |
| Եղվարդ | 47 | 73.43 | 50.2 | 4721.8 | 742.8 | 339 | 201.38 | 174.4 | 11971.8 | 2804.2 |
| Հրազդան | 16 | 20.24 | 118.3 | 868.8 | 495.1 | 113 | 66.49 | 130.5 | 10256.4 | 1889.7 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 3 | 3.45 | 259.4 | 336.0 | 306.7 | 84 | 77.12 | 252.0 | 1693.1 | 582.6 |
| Ամասիա | 1 | 5.85 | 124.6 | 124.6 | 124.6 | 6 | 9.33 | 40.9 | 261.0 | 128.5 |
| Անի | | | | | | 51 | 63.28 | 110.6 | 546.9 | 370.9 |
| Աշոցք | | | | | | 25 | 17.86 | 58.5 | 215.8 | 122.2 |
| Արթիկ | | | | | | 40 | 28.27 | 79.4 | 1428.6 | 378.1 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 3.24 | 59.4 | 59.4 | 59.4 | 39 | 69.40 | 92.6 | 1023.2 | 691.4 |
| Կապան | 5 | 44.08 | 33.3 | 585.8 | 273.7 | 18 | 8.79 | 120.0 | 841.6 | 339.7 |
| Մեղրի | 2 | 1.28 | 242.2 | 472.2 | 357.4 | 16 | 5.32 | 193.0 | 3000.0 | 723.4 |
| Սիսիան | 3 | 6.55 | 75.0 | 135.0 | 115.0 | 71 | 120.71 | 46.3 | 1977.4 | 499.5 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 17 | 19.18 | 37.1 | 1600.0 | 229.8 | 52 | 30.81 | 125.0 | 10000.0 | 1868.1 |
| Վայք | 22 | 41.91 | 76.6 | 151.4 | 117.1 | 33 | 13.47 | 58.8 | 1430.7 | 604.8 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | 1 | 0.03 | 500.0 | 500.0 | 500.0 | 19 | 4.05 | 213.3 | 3783.8 | 673.4 |
| Իջևան | 15 | 14.40 | 73.3 | 1684.4 | 491.8 | 28 | 21.13 | 267.5 | 9454.5 | 1230.2 |
| Նոյեմբերյան | 2 | 1.06 | 361.8 | 548.2 | 455.0 | 54 | 29.03 | 46.7 | 7368.4 | 839.4 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| **Արագածոտնի մարզ** | | | | | | | | | | |
| Աշտարակ | 1 | 190.0 | 2819.7 | 2819.7 | 2819.7 | 159 | 166244.0 | 130.7 | 22200.0 | 2572.0 |
| Ապարան | 2 | 4100.0 | 37.8 | 378.4 | 208.1 | 24 | 30509.0 | 124.1 | 609.6 | 368.6 |
| Թալին | 1 | 235.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 15 | 37310.0 | 63.2 | 1454.8 | 152.3 |
| Ծաղկահովիտ | | | | | | 1 | 2970.0 | 60.0 | 214.3 | 86.6 |
| **Արարատի մարզ** | | | | | | | | | | |
| Արտաշատ | 21 | 20191.4 | 146.3 | 850.6 | 599.7 | 97 | 95181.0 | 173.9 | 7140.3 | 893.2 |
| Մասիս | 5 | 1980.0 | 832.7 | 1989.0 | 1363.5 | 211 | 145183.3 | 187.5 | 25000.0 | 1209.4 |
| Վեդի | 5 | 7541.0 | 44.3 | 646.0 | 244.9 | 93 | 100154.4 | 126.1 | 5000.0 | 660.5 |
| **Արմավիրի մարզ** | | | | | | | | | | |
| Արմավիր | 5 | 3859.0 | 356.3 | 3463.6 | 1182.7 | 160 | 185842.8 | 131.6 | 9090.9 | 1215.1 |
| Բաղրամյան | | | | | | 11 | 13190.0 | 100.0 | 833.3 | 234.6 |
| Վաղարշապատ | 6 | 12405.0 | 48.0 | 6020.5 | 917.2 | 281 | 303606.4 | 197.4 | 26528.4 | 1527.1 |
| **Գեղարքունիքի մարզ** | | | | | | | | | | |
| Գավառ | 13 | 14480.0 | 110.0 | 123.1 | 114.1 | 32 | 33150.0 | 186.6 | 1084.3 | 658.1 |
| Ճամբարակ | | | | | | 5 | 5661.0 | 71.3 | 2286.2 | 148.1 |
| Մարտունի | 20 | 22684.0 | 119.1 | 219.8 | 205.4 | 92 | 114211.6 | 119.3 | 5000.0 | 278.7 |
| Սևան | 3 | 1233.3 | 118.5 | 484.5 | 356.5 | 9 | 17357.0 | 240.0 | 3110.4 | 303.9 |
| Վարդենիս | 6 | 3451.8 | 67.5 | 1150.0 | 768.3 | 10 | 19530.0 | 72.5 | 987.2 | 150.0 |
| **Լոռու մարզ** | | | | | | | | | | |
| Ալավերդի | 3 | 112.1 | 609.5 | 954.5 | 782.3 | 8 | 8613.0 | 114.3 | 1388.9 | 215.9 |
| Գուգարք | 13 | 2732.7 | 224.4 | 5203.0 | 2962.0 | 68 | 63730.9 | 77.9 | 14083.3 | 1080.9 |
| Սպիտակ | 5 | 6701.5 | 115.2 | 607.5 | 245.2 | 70 | 95651.5 | 104.9 | 1348.3 | 204.5 |
| Ստեփանավան | 4 | 1245.0 | 553.7 | 554.4 | 554.3 | 12 | 11583.2 | 88.2 | 1666.7 | 175.5 |
| Տաշիր | 5 | 5735.0 | 148.3 | 410.0 | 305.1 | 3 | 1801.6 | 45.3 | 400.0 | 90.0 |
| **Կոտայքի մարզ** | | | | | | | | | | |
| Աբովյան | 99 | 67984.2 | 264.0 | 5648.9 | 2606.7 | 331 | 256144.8 | 264.5 | 35353.5 | 1963.4 |
| Եղվարդ | 159 | 128128.1 | 445.5 | 6889.8 | 2603.0 | 285 | 250525.9 | 173.6 | 27000.0 | 2846.5 |
| Հրազդան | 7 | 6580.0 | 233.0 | 4750.0 | 1879.5 | 52 | 51981.4 | 117.7 | 34848.5 | 1320.2 |
| **Շիրակի մարզ** | | | | | | | | | | |
| Ախուրյան | 18 | 4989.7 | 554.4 | 6666.7 | 2695.9 | 40 | 37035.5 | 113.6 | 18750.0 | 331.3 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | 2 | 800.0 | 402.1 | 467.4 | 434.8 | 6 | 5992.0 | 67.9 | 180.6 | 159.1 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 63.2 |
| Արթիկ | 1 | 28.0 | 3267.9 | 3267.9 | 3267.9 | 23 | 21740.6 | 111.8 | 5000.0 | 216.5 |
| **Սյունիքի մարզ** | | | | | | | | | | |
| Գորիս | 1 | 600.0 | 891.0 | 891.0 | 891.0 | 15 | 20285.6 | 112.2 | 1700.0 | 370.1 |
| Կապան | 8 | 4538.0 | 198.1 | 1787.1 | 970.8 | 53 | 38177.0 | 67.9 | 2638.9 | 297.6 |
| Մեղրի | 4 | 22278.3 | 269.4 | 670.5 | 480.4 | 5 | 5026.0 | 68.5 | 632.9 | 191.8 |
| Սիսիան | | | | | | 4 | 4800.0 | 123.5 | 875.0 | 195.9 |
| **Վայոց Ձորի մարզ** | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 6 | 2176.1 | 244.4 | 1492.5 | 698.5 | 29 | 27291.0 | 96.7 | 7659.6 | 499.3 |
| Վայք | 6 | 3571.6 | 858.0 | 872.0 | 864.6 | 9 | 9047.0 | 120.7 | 1448.3 | 199.6 |
| **Տավուշի մարզ** | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 3 | 2877.0 | 75.8 | 810.0 | 110.6 |
| Իջևան | 20 | 21249.8 | 151.2 | 3000.0 | 1957.7 | 46 | 42246.7 | 74.1 | 14423.1 | 517.0 |
| Նոյեմբերյան | 11 | 6067.6 | 76.4 | 1656.0 | 851.1 | 6 | 5910.0 | 125.0 | 1948.1 | 220.7 |

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարք 0.63 հա մակերեսով, Արագածոտնի մարզում:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6224 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 54.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 0.4%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 370 բնակարանների, 538 անհատական բնակելի տների, 2772 հասարակական, 656 արտադրական նշանակության օբյեկտների, 1663 միավոր /7529.07 հա/ հողերի, 209 ավտոտնակների և 16 այգետնակի վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 184 վարձակալության գործարքների, այդ թվում 31 միավոր /4.14 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 91.7%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 7529.07 հա հողերից 13.80 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 7515.27 հա հողերի 388.85 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 18.20 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 3862.70 հա, որից 3844.45 հա՝ գյուղատնտեսական նշանակության: 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության մարզերում վարձակալվել են 6873.93 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 15673 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 16.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.7%/, առանձնատների /23.5%/. հասարակական նշանակության օբյեկտների /11.3%/ և հողերի /8.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8320 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2011թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ նվազել է 3.2%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել են 4935.42 հա մակերեսով հողեր, որից 261.33 հա՝ Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 91.7%-ը կամ 4525.14 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 4.70 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 3450.76 հա, որից 3424.83 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 976 գործարքներ, որից 604-ը՝ Երևանում: Ընդ որում,

հիփոթեքային գրավադրման գործարքներից 83.6%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 10.3%-ն՝ անհատական բնակելի տների, 2.5%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.3-ական%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների և ավտոտնակների, 1.5%-ն՝ ամառանոցների և 1.4%-ն՝ հողերի նկատմամբ, որից 0.1%-ը՝ գյուղատնտեսական նշանակության: 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն նվազել է 43.1%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 52.4%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 16.4%-ով:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 14269 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքների, որոնց քանակը 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 36.8%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 11.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.9%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն